№ 71 ՈՒՐԲԱԹ ԱՊՐԻԼԻ 16 **1899** ՈՒՐԲԱԹ ԱՊՐԻԼԻ 16 № 71

ՔՍԱՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Բաժանորդագրութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Բաժանորդագրութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ
Օգնութեան մի եղանակ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Կառավարչական հաղորդագրութիւն. Դատաստանական դահլիճից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Թիւրքիայից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.—Ցուդայի վերջին գիշերը։

## ՕԳՆՈՒԹԵԱՆ ՄԻ ԵՂԱՆԱԿ

Այժմ սկսվում է տարածվել օգնութեան մի եղանակ, որ մեծ ծառայութիւն է մատուցանում խոշոր աղէտների ժամանակ, բայց որը կարող է օգտակար լինել և սովորական դժբաղդութիւնների դէպքում։ Կարօտ գիւղացուն տալիս են ոչ թէ դրամ, որ անկարող է անմիջապէս նրան օգնել, այլ այն առարկաները, որ հարկաւոր են նրա կեանքի և նրա տընտեսութեան համար։ Օրինակ, տալիս են նրան լծկան եզ, ձի, գութան և ուրիշ գիւղատնտեսական գործիքներ, տալիս են սերմացու ցորեն և գարի, կամ խոտի մի յայտնի քանակութիւն տան անասուններին մինչև գարուն խնամելու նպատակով։ Ռուսաստանի ներքին նահանգներում վընասված գիւղացիներին օգնելու համար կառավարութիւնը այս օրերս գնել տուեց Ուրալի և Տուրգայի կողմերում մինչև 70,000 ձի, որ պէտք է ամենակարճ միջոցում, երկաթուղիների և ուրիշ ճանապարհների միջոցով, հասցնվեն դէպի սովից վնասված տեղերը և կարողութիւն տան գիւղացիներին հերկելու և վարելու իրանց հողերը։

Մեր ընթերցողները յիշում են, որ մի քանի տարի սրանից առաջ, երբ մեր հարևան Փոքր-Ասիայի ժողովուրդը ենթարկվեց արհաւիրքների, որի պատճառով քայքայվեց նրա տնտեսական ապահովութիւնը, նոյնպէս գործադրվեց օգնելու այն եղանակը, որի մասին մենք խօսում ենք։ Ամերիկայի և Անգլիայի կողմից գործող և օժանդակիչ խմբեր ու կոմիտէներ առնում էին կարօտ գիւղացիների համար լծկան եզներ, գութաններ և սերմացու բաժանում նրանց մէջ։ Գիւղացին ձեռք բերելով այն առարկաները, որ անհրաժեշտ են հողը մշակելու համար, իսկոյն ձեռնարկում էր գործի և այդպիսով ապահովում իր կարիքները։ Այդ եղանակով էապէս օգնութիւն հասցրվեց ժողովրդին, և նա վերանորոգեց իր տնտեսութիւնը հաստատ հիմքերի վրա։

Օգնութեան այդ եղանակը ունի այն յարմարութիւնը և առաւելութիւնը, որ գիւղացուն մատակարարում է տնային կենդանիներ և սերմացու աւելի էժան գնով, քան գիւղացին կարող է ձեռք բերել։ Այնտեղ, ուր տնտեսութիւնը քայքայված է և բոլոր պաշարները սպառված են, շատ դժուար է ձեռնտու գներով գնել աշխատող ձիեր, եզներ և սերմացու։ Իսկ կառավարութիւնը, զեմստվօն, կամ յատուկ մասնաժողովները կարողութիւն ունեն գնել այդ առարկաները այն շրջաններում, որտեղ նրանք էժան են և տեղափոխել դէպի կարօտ տեղերը։ Օրինակ, Ռուսաստանի ներքին նահանգներում այժմ ուրախ կը լինէին գիւղատնտեսական մշակութեան համար վճարել 50—60 ռուբլի և աւելի իւրաքանչիւր ձիու համար. բայց չը կան ծախու կենդանիներ և այդ գնով, մինչդեռ կառավարութեանը աջողվել է գնել լաւ ձիեր միջին թւով 26—30 ռուբլիով իւրաքանչիւրը։

Անցեալ տարի, երբ Անդրկովկասի մի քանի կէտերում տեղի ունէր անբերրիութիւն, կարելի եղաւ մի քանի դաւառներում տալ գիւղացիների ձեռքը փոքր փոխարէն սերմացու ցորեն և այդ հանգամանքը ունեցաւ լաւ արդիւնք, որովհետև նպաստը անմիջապէս հասաւ իր նպատակին։ Որքան գեղեցիկ մի բան կը լինէր, եթէ կարելի լինէր օգնութեան գործը կանոնաւորել և ժամանակին օժանդակող հանդիսանալ գիւղացուն այն եղանակով, որ տալիս է նրան իսկական ապահովութիւն։

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՄԱՄՈՒԼ

Պետերբուրգի ռուսաց մամուլի մէջ մի նոր և բաւական տաք բանակռիւ էլ սկսվեց։ Այս անգամ պատճառը Պուշկինի արձանն է։ Ցայտնի է որ դեռ 1881 թուականին Մոսկվայում դրված է Պուշկինի արձանը։ Բանաստեղծի ծննդեան հարիւրամեակի առիթով «Новое Время» լրագիրը առաջարկեց մի այլ արձան կանգնեցնել Պետերբուրգում և սկսեց կամաւոր նուէրներ հաւաքել։ Փակագծի մէջ ասենք, որ լրագիրը մինչև ապրիլի 10-ը հաւաքել է այդ նպատակով 20,078 ռուբլի 84 կոպէկ և մի քիչ բէկլամային ձև է տուել նուիրատուութիւններին, խոստանալով առանձին գրքով հրատարակել նուիրատուների ազգանունները։ Ինչ և իցէ, հարցը դրանում չէ։ «С.-Петерб. Вѣд.» լրագիրը նորերումս այն միտքը յայտնեց, որ առհասարակ անյարմար է այսպիսի ժամանակ, երբ միլիոնաւոր մարդիկ տանջվում են սովից, փող հաւաքել արձան կանգնեցնելու համար։ Ինքը, Պուշկին, իր համար արձան է կանգնեցրել և դա—նրա ստեղծագործութիւններն են։ Այդ արձանը մարդկանց սրտում անջնջելի պահելու համար լրագիրը առաջարկում էր Պուշկինի անունով հիմնել ժողովրդի մէջ կրթութիւն տարածող մի ընկերութիւն։ Այդ գեղեցիկ գործով աւելի կարելի է յաւերժացնել բանաստեղծի յիշատակը, քան պղնձէ արձաններ կանգնեցնելով։ Սուվորինի լրագիրը վրդովվեց այդ տեսակ մտքից և խիստ արշաւանք սկսեց «С.-Петерб. Вѣд.»-ի դէմ և գործադրեց, ինչ ասել կուզի, իրան յատուկ ձևերը, վերցնելով յօդուածից մի քանի տող, աղաւաղելով հակառակորդի ասածը և վերագրելով նրան տարօրինակ մտքեր։ Այն կախարդական ոյժը, որին յենվում է «Новое Время» լրագիրը իր արշաւանքների մէջ, հայրենասիրութիւնն է, այն էլ իսկ և իսկ այն հայրենասիրութիւնը, որին հետևում է այդ լրագիրը։ Ով նրա հետ չէ, նա հայրենասէր չէ և այս բանը այնքան պարզ է Սուվորինի և ընկ. համար, որ ամեն մի դէպքում, երբ որ և է հակառակ կարծիք է յայտնվում, իսկոյն հրապարակական կասկածի են ենթարկվում կարծիք յայտնողի ծագումը, ուղղափառութիւնը, հայրենասիրութիւնը։ «С.-Петерб. Вѣд.» լրագիրը մի քանի պատասխանների մէջ մերկացրեց այդ ամբողջ կեղծիքը, այդ բաժբաստղ, անուանարկող ձևերի ամբողջ վատութիւնը։ Նա ասաց որ արձանները չեն միայն անմահացնում մեծ գործիչներին. կատարել նրանց նուիրական մտքերը, օգնելով տառապողներին, գիտութեան լոյս տարածելով խաւար ամբոխի մէջ—ահա մի նոյնպիսի փառաւոր յուշարձան, որպիսին է պղնձից ձուլած արձանը։ Ռուսաստանի ազգաբնակութեան ահագին մեծամասնութիւնը այնքան խոր է թաղված անգրագիտութեան, մտաւոր մթութեան մէջ, որ նոյն իսկ չը գիտէ էլ թէ եղել է Պուշկին։ Եւ ո՞րն է լաւ. ձեռագործ արձան կանգնեցնել մայրաքաղաքում, թէ ուսում տարածելով հնարաւորութիւն տալ այդ ահագին մեծամասնութեան ճանաչելու Պուշկինին, հասկանալու նրա ասածները։ Բայց այդպիսի մտքերը ինչ գին ունեն ռուս չովինիստների համար, որոնք միայն փայլու չպար են սիրում։ Սուվորին, մի կողմ թողնելով իր հակառակորդի մտքի էութիւնը, ձեռք առաւ «С.-Петерб. Вѣд.»-ի յօդուածներից մի բառ և ասաց թէ այդ լրագրի խմբագիր Իշխան Ուխտոմսկի կուռք է անուանում Պետրոս Մեծի և Եկատերինա կայսրուհու արձանները։ Դա արդէն չափազանցութիւն էր։ Եւ Իշխան Ուխտոմսկի տպագրեց իր լրագրում հետևեալ տողերը.

*Վերջնականապէս կորցնելով ամեն մի յենակէտ, բանակռիւ համար ամեն միջոցներ թոյլատրված և ժամանակակից համարելով, «Новое Время»-ի հրատարակիչը հասաւ այն աստիճանին, որ իր սովորական միմսուութիւնների մէջ մտցնում է նոր տարր, ասելով որպէս թէ «С.-Петерб. Вѣд.» անուանել է Պետրոս Մեծի և Եկատերինա II-ի արձանները կուռքեր։ Լաւ իմանալով, որ Նեմեզիդայի մտրակի տակ Ա. Սուվորին իր բարոյական խեղճութեան մէջ արդէն կորցրել է ամեն մի չափի զգացմունքը,—ես չեմ գնայ այս զուտ սուվորինական ճանապարհով, որովհետև մեր Միապետների անունները չէ կարելի սրբապղծաբար բերել լրագրական սիւնակների մէջ հակառակորդին քաղաքական անբարեմտութեան մէջ մեղադրելու համար։*

Շատ զարմանալի և տարօրինակ է, որ ռուսաց լրագիրների մի մասը բոլորովին պարտաւորական չէ համարում մտքերին պատասխանել լուրջ հերքումներով, այլ իսկոյն ձեռք է առնում խուզարկուի դերը։ Պուշկինի տօնի առիթով յայտնված մի համակրելի, հանրաչան միտք և այսպիսի մեղադրանք... Կարելի՞ բան է դա։

*

Մի նոր ձայն մեր երկրի մոռացված անկիւններից։ Այս անգամ խօսողը Ծալկա դաւառամասն է (Թիֆլիսի նահանգում)։ Ծալկա ընկած ինտելիգենտներից մէկը «Тиф. Листокъ» լրագրում դառնապէս գանգատվում է, որ այդ ընդարձակ գաւառամասում ոչ դեղատուն կայ, ոչ բժիշկ, ոչ նոյն իսկ ֆելդշէր։ Լաւ կը լինէր, ի հարկէ, եթէ այնտեղ հիւանդութիւններ էլ չը լինէին, բայց երկրագնդի ո՞ր անկիւնում է մարդ ապրում առանց հարիւր ու մի տեսակ հիւանդութիւնների։ Ծալկայում էլ, ինչ կասկած, մարդիկ հիւանդանում են, կոտորվում են։ Ի՞նչ ա-

---

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ՑՈՒԴԱՑԻ ՎԵՐՋԻՆ ԳԻՇԵՐԸ

(Էմիլ Գեբհարտի „Պատմական Առասպելներից“)

—

Յիսուս Քրիստոսին համբուրելով մատնելուց յետոյ, Ցուդան երկար ժամանակ անշարժ կանգնած էր Զիթենեաց պարտիզում։ Նա աչքերով հետևում էր Մարդու Որդուն Երուսաղէմ տանող զինուորներին։ Գունդը լապտերների ու ջահերի լուսի տակ շողշողող նիզակներով ու սրերով՝ ինչպէս մի աւազակախումբ՝ արագ ու լուռ մտաւ շրջապատող խաւարի մէջ և՝ վերջապէս՝ իսպառ անհետացաւ։ Այդ ժամանակ Ցուդան փաթաթվեց իր կարմիր քղամիդում և՝ թիկն տուած ձիթենի ծառին՝ սպասում էր ինչ-որ մի բանի։

Դիշերվայ ժամի մէկն էր։ Լուսինը կապոյտ սպիտակ լուսով ողողել էր հեռուում՝ նուիրական քաղաքի պարիսպներով վերջացող ամայի տարածութիւնը։ Տաճարի բարձրութիւնից հանում էին ինչ-որ խուլ ձայներ. իսկ հօրիզոնի միւս կողմից լսվում էր բուէնի ճիչը. մի մեծ չղջիկ յանկարծ թռաւ անցաւ, խփելով իր սառը թևը Ցուդայի երեսին։ Սա դլխին քաշեց քղամիդը։

Դեռ սպասում էր։ Ցանկարծ սառստուռ անցաւ ամբողջ մարմնով, և իրան զցեց Գեթսեմանի պարտէզը, ուր ինչ-որ մի մարդու ստուեր երևաց։ Սա մի ծերունի հրէայ էր, սպիտակ մօրուքով, ձեռափայտի վրա յենված. ծանր քայլերով մոտեցաւ Ցուդային, չպրպեց նրա առաջ կաչուէ մի քսակ, յետոյ՝ առանց խօսք ասելու՝ շտապով հեռացաւ...

—Իմ առաջ այնպէս չպրտեցին փողերը, ինչպէս չան առաջ ոսկորը—մտածեց Ցուդան։ Բայց և այնպէս վերցրեց քսակը, ժպտաց, որովհետև ծանր էր, և արծաթները զնգզնգում էին նրա մէջ։ Դուրս վազեց պարտիզից և բաց արեց քսակը լուսնի շողերի տակ։ Փողերի փայլը նկատելով, արտասովոր մի բանով զարհուրածի նման ցնցվեց։ Յետոյ՝ մէկ մէկի ետևից համարեց դրամները, ծանր ու թեթև արեց, ուշիուշով զննեց և՝ մի մաշվածը նշմարելով՝ մտքումն ասեց.

—Սա Օգոստոսի դրամն է, վախճանված կայսրի պատկերով. իսկ ես աւելի սիրում եմ նոր դրամները Տիբերիոսի պատկերով։ Այնու ամենայնիւ, քահանայապետը կատարեց իր խօսքը. սա լաւ է։

Նա քսակը խրեց գօտու մէջ և բռնեց Երուսաղէմի ճամբան։ Խրոնը հանգիստ էր և նա իրան բախտաւոր էր զգում։ Մխիթարվում էր, մտաբերելով Կայիափայի ասած կեղծաւոր խօսքերն այն երեկոյեան, երբ վաճառի էր հանում Ցուդան իր վարդապետին։ Եւ իսկապէս ինչ էր արել նա։ Տուել էր օրինաւոր դատապարտութեան—մտածում էր նա—սուտ մարդարէին, որ արհամարհում էր Մովսէսին և ապստամբվում էր նրա օրէնքի դէմ, իսրայէլացիների այն ինքնակոչ թագաւորին, կեղծ Մեսիային, որ արտաքսում էր Սողոմոնի տաճարից հատավաճառներին և փակում էր երկնային արքայութեան դռները հարուստների առաջ։ Նա, հաւատաս Իսկարիովտացին, լուծեց Աստուծու, Դաւթի և Հռոմի վրէժը։ Եւ այն իսկ օրը, երբ արեգակը իր ճառագայթներով կը լուսաւորէ Յիսուսին տրված պատուհասը, Աստուծու ճշմարիտ զաւակները՝ դևտացիները, փարիսեցիները և սադուկեցիները, որպէս և կայսրի ու սրա հպարտ կուսակալ Պիղատոսի բոլոր բարեկամները կը երկրպագեն իրան՝ ինչպէս մի սխրագործի։

—Իմ անունը—մտածում էր նա—կապրի այնքան երկար, որքան Յակոբի, Եղիայի և Դանիէլի անունները։

—

Ցուդան մտաւ մռայլ, լուռ քաղաքը և մտածելով, որ այդ ժամանակ Կայիափան հարցափորձ էր անում Յիսուսին, դիմեց դէպի քահանայապետի ապարանը։ Հեռուից տեսնում էր նրա լուսավառված պատուհանները. պատշգամբների վրա, սրահակներում խռնվում էին ստուերներ. սանդուղքների առաջ՝ պլպլում էր կարմրագոյն ճրագը։ Փողոցը ամայի էր. տեղ-տեղ կանչում էր աքաղաղը։

«Արշալոյսը մօտ է»,—մտածում էր Ցուդան։ Բակի մէջտեղում վառված էր մեծ խարոյկը։ Տասներկուսից մէկը՝ Պետրոսը, նստարանի վրա նստած՝ ձեռները տաքացնելով, խօսում էր մի ջահիլ աղախնու հետ։ Պետրոսը երևում էր միայն ժամանակ և՝ զայրացած և խորը վշտացած։ Բարձր ձայնով ասում էր ջահիլ աղջկան.

—Ճշմարտութեամբ երդվում եմ, որ չեմ ճանաչում այդ մարդուն։

Երկրորդ անգամ խօսեց հաւը։ Աղախինը հեռացաւ։ Պետրոսը խորասուզվեց ծանր խոհերի մէջ։ Նա չը նկատեց, թէ ինչպէս Ցուդան մոտեցաւ խարոյկին։ Կայիափայի ապարաններից հասնում էին կամ ընդհանուր խուլ, կամ բարձրաձիչ դաժան ձայներ, կամ թէ փափուկ, քընքշութեամբ արտասանված բառեր, որոնց լսելիս ամբողջ մարմնով փշաքաղվում էր և՝ ինչպէս ժանուկ՝ լաց էր լինում գալիլիացի ձկնորսը, կարծելով, թէ ինքը միայնակ է նստած կրակի մօտ։

Այդ պահուն աքաղաղը երրորդ անգամ կանչեց։

Պետրոսը ցնցվեց. գլուխը բարձրացրեց և վեր թռաւ տեղից։ Ուրացողը և մատնիչը իրար երես առ երես եկան։

Բայց Պետրոսի դէմքը Ցուդային խիստ սարսափելի երևաց, և Պետրոսն այնպիսի վճռականութեամբ ձեռքը դէպի սուրը տարաւ, որ Ցուդան լեղապատառ հեռացաւ։

Երկար ժամանակ մտն եկաւ նա տաճարի շուրջը, որի դռները բացվում էին միայն արշալուսին։ Կամենում էր տաճարի արտաքին անցքերի մէջ առաջուց յարմարաւոր տեղ ընտրել իր լուժայափոխական սեղանի համար։ Ի հարկէ, քահանայապետն ու դևտացիները՝ ամեն աջակցութիւն ցոյց կը տան, և նա արդէն տեսնում

նեն, տեղական «հէքիմները» շարլատաններ են, իսկ գիտութեան հրահանգներով և փորձերով ծանրաբեռնված բժիշկները միայն քաղաքներն են սիրում։ Ահա հայրենի իրականութեան փաստեր։ Հիւանդանում է տեղային դպրոցի տեսչի կինը. մի դատարկ բան է, բայց բժիշկ չը կայ և հիւանդի ամուսինը չորս անգամ տանում է նը-բան Մանգլիս. ձմեռ, անտանելի ճանապարհներ և ի լրումն ամենայնի 150 ռուբլի ծախս։ Մի ուսուցչի քթի վրա բշտիկ է դուրս գալիս. հարկաւոր է 5 կոպէկանոց մի դեղ, բայց որտեղից գտնել։ Ուսուցիչն էլ գնում է Մանգլիս և ծախսում է իր ամսական ամբողջ ռոճիկը։ Մի ուրիշին հարկաւոր է 20 կոպէկի լուծողական դեղ փոքրացաւի դէմ. նա մարդ է վարձում 5 ռուբլով, ուղարկում է Մանգլիս այդ 20 կոպէկանոց դեղը բերելու համար։ Սրանք տեղական ինտելիգենցիայի կեանքից վերցրած փաստեր են։ Հապա ժողովուրդը։

Ես բերի անհատական փաստեր—ասում է նամակագիրը.—իսկ եթէ նպատակ ընտրեմ համախմբել էլի մի քանի փաստեր և նայել հասարակ մարդկանց սղոմելի խրճիթների մէջ, այն ժամանակ պատկերը լիակատար կը լինի։ Ի՞նչ սարսափներ ասէք, որ չէք տեսնի այնտեղ... Ես չեմ թի այդ սարսափները, այլ միայն կասեմ, որ նոյն իսկ հանճարակ հիւանդութիւնները, ինչպէս են տիֆն ու ծաղիկը, այստեղ երբէք չեն վերջանում և հիւանդներին ոչ միայն ոչ ոք չէ բժշկում, այլ և այդ հիւանդութիւնները շատ քչերին են յայտնի։

Շատ ափսոս որ նամակագիրը աւելորդ է համարել աւելի մանրամասն պատմել «ողորմելի խրճիթների սարսափները». պէտք էին «գօկումենտներ», որպէս զի լաւ հասկացվի դրութիւնը։ Բայց և այնպէս, ընդհանուր գծերով նկարած պատկերն էլ բաւական է, որ ընթերցողը հարց տայ իրան. եթէ այսպէս է գիւղական աշխարհի մի կտոր, որ Թիֆլիսի քթի տակ է գտնվում, հապա ինչ կը լինի անօգնականների դրութիւնը աւելի հեռաւոր վայրերում։

*

Հայ կաթոլիկ կղերը, տարիների ընթացքում դատապարտված մնալով լռութեան, վերջապէս միջոց գտաւ գօտեմարտ սկսելու լուսաւորչական կղերի հետ։ Դաւանափոխական պրոպագանդան մինչև այժմ կատարվում էր ասիական Թիւրքիայի կորած-մոլորված անկիւններում, ուր 8 դրուշով մի հաւատացեալ գտնելը սովորական բան է։ Բայց այժմ նոյն պրոպագանդան արդէն հրապարակով է կատարվում, տպագրական խօսքի միջոցով։ Կ. Պոլսում հրատարակվեց մի բրոշիւր, որի մէջ կաթոլիկ մի վարդապետ, Աղաբեան պատրիարքի օրհնութեամբ, քարոզում է թէ Գրիգոր Լուսաւորիչ, Վարդան Մամիկոնեան և բոլոր հայերը կաթոլիկ էին. և վերջ ի վերջոյ հրաւիրում է, որ ամբողջ հայ ազգը ընդունէ կաթոլիկութիւն։ Լուսաւորչական կղերը, ի հարկէ, լուռ չը մնաց և Օրմանեան պատրիարքը մի հովուական շրջաբերական հրատարակեց այդ բրոշիւրի դէմ։ «Արևելք» լրագրի մէջ կարդում ենք.

Երէկ առաւօտ մայրաքաղաքիս բոլոր եկեղեցիներուն մէջ հանդիսաւորապէս կարդացվեցաւ Պատրիարքական Շրջաբերականը, և բոլոր քարոզիչները այդ մասին խօսեցան եկեղեցիներուն մէջ, որոնք հաւատացեալներու արտասովոր բազմութեամբ լեցուած էին։ Մայր Եկեղեցիին մէջ Շրջաբերականի ընթերցումէն վերջը Ս. Պատրիարք Հայրը պերճախօս քարոզով մը բացատրեց Հայ Եկեղեցիին առաքելական, ընդհանրական, ամէնէն հին եկեղեցին ըլլալը, ուր պահուած են հնաւանդ ամէն կանոն և վարդապետութիւն առանց այլայլութեան. այս առթիւ Ն. Սրբազնութիւնը բացատրելով գաւառացի կարօտ ազգայիններուն վիճակը, յորդորեց ժողովուրդը որ փութայ նպաստներ ղրկել այդ գաւառացի հացակարօտ եղբայրներուն ու քոյրերուն։

Մեր խմբագրութիւնն էլ ստացել է թէ Աղարեանի բրոշիւրը և թէ Օրմանեանի շրջաբերականը. Պատեհ առիթով կը խօսինք նրանց մասին, առ այժմ այսքանը կասենք, որ վերին աստիճանի տիուր, վերին աստիճանի անպատուաբեր տպաւորութիւն է թողնում այդ կրօնական ճակատամարտը, որի նմանը չէ տեսնված նոր պատմութեան ընթացքում։ Ի՞նչ օրերի են հասել խեղճ թիւրքահայերը, որ Լէնկթէմուրների սրածութիւնը տեսնելով XIX դարի վերջում, այժմ էլ ենթարկված են կրօնական այն ճակատամարտին, որ վարում են Քրիստոսի փոխանորդները ճիշդ այնպէս, ինչպէս Լէնկթէմուրի ժամանակները...

## ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Տօմսկ։ Պետերբուրգի ուսանողական անկարգութիւնների մասին Տօմսկ քաղաքում տեղեկութիւններ ստանալուց յետոյ, փետրվարի 24-ին տեղական համալսարանի ուսանողները, թւով 400 մարդ, ժողով գումարեցին, հրաժարվեցին ցրվել ուսումնարանական իշխանութեան պահանջով և որոշեցին՝ միանալ ընկերների հետ և համաձայնութիւն յայտնել ընդհանուր բողոքի մէջ, ներկայացնելով պահանջներ Պետերբուրգի վիրաւորված ուսանողներին բաւարարութիւն տալու մասին, ուսանողների անձնաւորութեան անձեռնմխելիութեան երաշխաւորութեան մասին և այլն, իսկ մինչև պահանջներին բաւարարութիւն տալը վճռեցին չը յաճախել դասախօսութիւնները և աշխատել պաշտօնապէս փակել տալ համալսարանը։ Այն պրոֆէսօրների դէմ, որոնք կը շարունակեն պարապմունքները, վճռվեց օբստրուկցիայի սիստեմն ընդունել։ Ժողովի որոշումը հրատարակվեց առանձին հրաւէրի ձևով և, սկսած վերոյիշեալ թւից, ուսանողները յիրաւի դադարեցին յաճախել դասախօսութիւնները և չէին պարապում կլինիկաներում, և գալիս էին համալսարան միայն ժողովներին մասնակցելու համար. ուսումնարանական իշխանութեան յորդորների վրա ոչինչ ուշադրութիւն չէին դարձնում, իսկ իրանց այն ընկերներին, որոնք մարտի 1-ին կամենում էին մտնել համալսարան դասախօսութիւններ լսելու, ուժով չէին թոյլ տալիս մտնել համալսարանի շէնութիւնը։

Մարտի 2-ին, համալսարանի վարչութեան որոշմամբ, արձակվեցին 45 ուսանողներ, մասնաւանդ նրանք, որոնք նկատված էին որպէս անկարգութիւնների դրդողներ, որոնք ապա և հեռացվեցին, թւով 36 մարդ, Տօմսկից, բացի տեղացիներից։

Մարտի 4-ին զբաղմունքները համալսարանում ժամանակաւորապէս դադարեցվեցին մինչև ամսի 8-ը, բայց իսկապէս, ունկնդիրների բացակայութեան պատճառով, չը վերսկսվեցին։ Ամսի 15-ին, յամառ կերպով դասախօսութիւնները չը յաճախելու պատճառով, բոլոր ուսանողները արձակված համարվեցին՝ իրաւունք տալով նրանց կրկին խնդիրքներ տալ ընդունելութեան մասին, գոյութիւն ունեցող կանոններին ենթարկվելու պայմանով։ Առ այժմ խնդիրքները այնքան մեծ թւով չեն մտնում, այն միջոցների պատճառով, որ օբստրուկցիոնիստների կուսակցութիւնը ձեռք է առել, չը թոյլ տալով մնացած ուսանողներին մտնել համալսարան, կլինիկա և մինչև անգամ պօստը։ Ուսանողների մէջ տարածվում են հեկտոգրաֆով գրված թերթեր և հրաւէրներ, որոնց թւում «Պետերբուրգի համալսարանի փոխադարձ օգնութեան դրամարկղի» Տօմսկում արտատպված հրաւէրները։

Մարտի 20-ին քաղաքից հեռացվեցին էլի 14 հոգի ցոյց անողներ։

Ռիգա։ Ռիգայի պոլիտեխնիկական ինստիտուտում ժողով կայացաւ փետրվարի 18-ին, մօտ 160 ուսանողների ներկայութեամբ, ուր կարդացվեցին Պետերբուրգից ստացված նամակները ուսանողական անկարգութիւնների նկարագրութեամբ և որոնց մէջ հրաւիրվում էին ուսանողները միանալ ընդհանուր շարժմանը։ Ժողովը որոշեց, ի նշան համակրութեան դէպի Պետերբուրգի ընկերները, դադարեցնել դասախօսութիւնների լսելը։ Փետրվարի 19-ին առաւօտեան դասախօսութիւնները ինստիտուտում, սակայն, անարգել անցան, բայց մօտ 3 ժամին կրկին ժողով գումարվեց, թւով մօտ 300 մարդ, այնպէս որ անկարգութեան կողմնակիցները արգելում էին դասախօսութիւնների ընթերցումը և ստիպում էին պրոֆէսօրներին դադարեցնել զբաղմունքները։ Հոգաբարձուի կարգադրութեամբ, ուսումնարանական զբաղմունքները ինստիտուտում դադարեցին փետրվարի 20-ին։

Նկարագրված անկարգութիւններին մասնակցում էին 300—400 ուսանողներ, առաւելապէս 1-ին կուրսի, որոնց մեծամասնութիւնը բաւական չէզոք էր պահում իրան, իսկ ներգործական դեր սկսեց խաղալ ուսանողների համեմատաբար ոչ-մեծ խումբ, 60—70 հոգի, այնպէս որ աւելի նկատելի և աչքի ընկնող մասնակցութիւն ունէին ժողովներում հրէայ և հայ ծագում ունեցող ուսանողները։

Մարտի 5-ին ինստիտուտում դասախօսութիւնները վերսկսվեցին և շարունակվում էին անարգել մինչև մարտի 27-ը, երբ մօտ 200 ուսանողներ, ժողով գումարելով, նորից ստիպեցին դադարեցնել դասախօսութիւնները, որի պատճառով ինստիտուտի բոլոր ուսանողները արձակվեցին, իրաւունք ունենալով խնդիրքներ տալ յետ ընդունվելու մասին։

Իւրիեվ։ Պետերբուրգից տեղեկութիւններ ստանալուց յետոյ, Իւրիեվի համալսարանի ուսանողները, թւով մինչև 508 հոգի, փետրվարի 23-ին ժողով գումարեցին պաթոլոգիական ինստիտուտի աուդիտորիայում, բայց, չնորհիւ ուսումնարանական իշխանութեան յորդորների, ցրվեցին յետոյ հանգիստ, առաջուց յայտնելով, սակայն, իրանց պահանջները, այն է՝ բարոյապէս բաւարարութիւն տալ Պետերբուրգի ընկերներին, վերադարձնել արձակվածներին, ապահովել ուսանողներին ոստիկանութեան գործողութիւններից, տալ համալսարաններին ինքնավարութիւն և ժողովներ գումարելու ազատութիւնը, ոչնչացնել կամ պակասեցնել դասախօսութիւններ լսելու վճարը, ջնջել բոլոր ազգութիւնների վերաբերեալ եղած բոլոր սահմանափակումները և համալսարան ընդունել միջնակարգ դպրոցներն աւարտած բոլոր աշակերտներին։ Իսկ մինչև այդ պահանջներին բաւարարութիւն տալը, որ բացատրված է յետոյ առանձին հրաւէրի մէջ, ժողովը վճռեց դադարեցնել դասախօսութիւններ յաճախելը։

Համալսարանում տեղի ունեցած յուզմունքը արձագանք գտաւ անասնաբուժական ինստիտուտում, ուր ժողովին, որ գումարվեց կլինիկայում, եկան մինչև 200 ուսանողներ։ Ինստիտուտի դիրեկտորը համոզեց, սակայն, ուսանողներին ցրվել, որ և նրանք կատարեցին, յայտնելով, սակայն, թէ այլ ևս դիտաւորութիւն չունեն յաճախել դասախօսութիւնները, և հաւաքվել են համակրութիւն յայտնելու համար Պետերբուրգի անմեղ վնասված ուսանողներին։

Փետրվարի 24-ին գործադուլի կողմնակից համալսարանական ուսանողները խումբ-խումբ աուդիտորիայից աուդիտորիա էին անցնում, խնդրելով պրոֆէսորներին դադարեցնել դասախօսութիւնների ընթերցումը և յայտնելով որ, հակառակ դէպքում, կարող են տեղի ունենալ ոչ ցանկալի անախորժութիւններ. աուդիտորիաներում գտնվող իրանց ընկերներին նրանք առաջարկում էին հեռանալ համալսարանի շէնութիւնից։

Վերոյիշեալի պատճառով, համալսարանում և անասնաբուժական ինստիտուտում փետրվարի 24-ին պարապմունքները ժամանակաւորապէս դադարեցրվեցին։

Վերջը պարզվեց, որ ուսանողների անկարգութիւններին ղեկավարում էր համալսարանում կազմակերպված «Դօրպատի կազմակերպութիւնների դաշնակցական խորհուրդը», որը իր անունից հրատարակեց և տարածեց երկու հրաւէր, որոնցից առաջինում պատմված էին փետրվարի 8-ի Պետերբուրգի անկարգութիւնները շատ տենդենցիոզ և աղաւաղված կերպով, իսկ երկրորդը հրաւիրում էր, «Դօրպատի ուսանողութեանը» միանալ օբստրուկցիային արդէն միացած օտարաքաղաքացի ընկերներին։

Մարտի 4-ին վերսկսվեցին դասախօսութիւնները, սկիզբը ունկնդիրների անշնչան թւի ներկայութեամբ, մանաւանդ որ նոյն ամսի 10-ին պարապելու համար համալսարան և ինստիտուտ սկսեցին գալ համարեա բոլոր ուսանողները։

Այդ առիթով վերոյիշեալ «դաշնակցական խորհուրդը» մէկ առանձին հրաւէր հրատարակեց յայտնելով, թէ ինքն այլ ևս պարտաւոր չէ համարում գործերը վարել, որովհետև անմիտ է խօսքը ծածկվում էր ամբոխի կատաղի աղաղակներով։

—Բարաբբան, Բարաբբան...

Ցուդան սկսեց ներս խցկվել ամբոխի մէջ։ Բարեկամներից մի քանիսը ճանաչեցին. սրիկաները, մարդասպանները շնորհաւորում էին նը-բան և անառակները ժպտում էին երեսին։ Հասնելով ապարանների չէմքին՝ նա լսեց հազարաւոր կրծքերից դուրս պրծած մի նոր աղաղակ.

—Ի խաչ հան զդա, ի խաչ հան զդա։

Պիղատոսը թախծալից դէմքով իրան շրջապատող մարդկանց հետ ներս քաշվեց։ Մնացին միայն՝ երիտասարդ հարիւրապետը, որ թիկն տուած սրահի սիւներից մէկին, հետաքրքրութեամբ նայում էր ամբոխի վրա, և՝ պատկառելի ծերունի ռաբբին, որ ուշադրութեամբ կարդում էր մարգարէների գիրքը։ Ամբոխի կատաղութիւնը կամաց-կամաց իջաւ. ամենքն էլ զգում էին, որ ապարանների մէջ ինչ-որ մի օրհասական բան էր կատարվում։ Ռաբբին նշմարեց Ցուդային և մի քանի խօսք ասեց հարիւրապետի ականջին. սա նայելով Խակարիովտացու վրա, զզուանքով շարժեց ձեռքը և շտապով հեռացաւ։

Այդ ժամանակ կամացուկ բացվեցին ծանր դռներն իրանց բրոնզեայ փականքներով։ Պիղատոսը նորից երևաց պօրփիւրեայ սինաշարքերի մէջ. տիրեց գերեզմանական լռութիւն։ Մի բոպէից յետոյ Աստուծոյ ժողովրդի առաջ ներկայացաւ Յիսուսը երկու զինուորի պաշտպանութեան ներքոյ—դլխին՝ փշեայ պսակ, ճակատի ու այտերի վրայ երևում էին արիւնոտ շիթեր, ձեռքը տուած եղեգն, իսկ լանջով ձգած ծիրանին։

Շուարած ամբոխը նայում էր այդ արիւնոտ տեսարանին։ Ցուդան սոսկումով երեսը դարձրեց։ Պիղատոսը դիմեց ժողովրդին և՝ մեկնելով դէպի Յիսուս աջ ձեռքը, որի վրա փայլում էր այն մատանին, որով կնքում էր կայսերական հրամանները, բարձր ձայնով ասաց.

—«Ահա այրդ»։

Նորից լսվեց ամբոխի աւելի ևս կատաղի, ահռելի ու պահանջող աղաղակը.

—Ի խաչ հան զդա, ի խաչ հան զդա...

Կանանցից մի քանիսը հեկեկում էին. իսկ մէկը շուարած՝ Տիբերիոսի արձանը լիզելով՝ բացականչեց.

—Վայ նրան, վայ Երուսաղէմին... վայ Իսրայէլի Աստուծուն... վայ ինձ։

Հարիւրապետը գինուորների գլուխն անցած՝ դեղարդը ձեռին՝ սկսեց ճղել ամբոխը օրհասական հանդէսը առաջ շարժելու համար, իսկ երբ Ցուդան ուզեց ծածկվել, որ չը տեսնի Յիսուսի հայեացքը, հարիւրապետը սրի կոթով՝ կոպիտ կերպով խփեց նրա ուսերին.

—Ինչու՞ ես եկել դու այստեղ—ասաց նա։ Ծաղրելու եբրայեցի մարգարէի վիշտը, թէ՞ քո ներկայութեամբ սրբապղծելու Հռոմի մեծութիւնը։ Մեր աստուածները տանել չեն կարող մատնիչներին։ Կորիր այստեղից և ծածկիր խայտառակութիւնդ մի հեռաւոր, մի անապատ տեղում։

(Կը շարունակվի)

---

էր իր առաջ եգիպտական, յունական, հռոմէական և ասիական դրամների կոյտեր, որ փայլփայլում, շողշողում էին իր ձեռքերի մէջ։

Վերջապէս ռաբբի մէկը՝ շրջապատված մի քանի մարդկանցով, մօտեցաւ տաճարի վանդակին և սկսեց բանալ։ Ցուդան, ժպիտը երեսին, բարեկամաբար գլուխը շարժելով, շտապով մօտեցաւ նրան. բայց ռաբբին յոնքերը կիտեց, ձեռքերը պարզեց և կտրեց ճամբան։

—Ո՛չ մի քայլ—ասեց նա։ Օրէնքն արգելում է ամեն մի անմաքուր արարածի մտնելու տաճարի ներսը։ Գնա այստեղից, դու այս գիշեր ստացար երեսուն արծաթ ոչինչ մեղք չունեցող մի կեանք վաճառելու համար։ Գնա այստեղից, թէ չէ դուրս կը վանդեմ ինչպէս մի հեթանոսի, մի չնացողի կամ մարդասպանի։

—

Ցուդան հեռացաւ տաճարից։ Այժմ դիմեց դէպի Պիղատոսի դատարանը։ Հռոմայեցիները, նրա կարծիքով, պիտի մեծ բարեյօժարութիւն ցոյց տային իրան և՝ մինչև անգամ՝ հովանաւորութիւն։ Իսկ ինչ վերաբերում էր մոլեռանդ դատացիներին, սրանք նրա մէջ միայն արհամարհանք էին առաջացնում։ Նա իր սրտի խորքում խոստովանում էր, որ դատացիների աղէտը այժմ էլ այնպէս է, ինչպէս Մովսէսի օրերում, ոսկի հորթին էր երկրպագում։ Երբ նկատեցին, որ Խակարիովտացին հռոմայեցիների պաշտպանեալն է, որ կայսրի շնորհներն է վայելում և որ ոսկեայ բանուածքների, փղոսկրի, ասիական անուշաբոյր խնկերի, Հռոմ փոխադրվող այլ և այլ արդուզարդերի մեծ առուտուր է վարում, կը խնարհվեն իր առաջ, կը քծնեն իրան և իր ոտների տակ՝ Եհովայի սեղանից գողացած կնդրուկներ կը ծխեն։

Ինքն իրան այսպիսի գոռոզ, շահեկան ցնորներով միխիթարելով, Ցուդան անցնում էր ճանապարհով և իր խրոխտ հայեացքներով պատասխաններ էր տալիս այն վիրաւորիչ արհամարհանքներին, որոնցով նայում էին իր վրա հանդիպող օրինականներն ու փարիսեցիները, և որոնք մատով ցոյց էին տալի նրա վրա և զզուանքով խորշում նրանից, ինչպէս մի խայտառակ բանից։ Նա արագացրեց իր քայլերը և յանկարծ՝ ծռվելով փողոցների մէկի անկիւնից՝ աչքը բաց արեց մի սոսկալի տեսարանի առաջ։

Ժողովրդի մի ահագին խումբ կանգնած Պիղատոսի ապարանների առաջ, մնդացնում էր օդը վայրենի աղաղակներով և խփում էր բռունցքներով պատերին։ Այստեղ էին խմբված Երուսաղէմի և Ցուդայի թագաւորութեան ամեն տեսակ տակնքները՝ գողեր, մարդասպաններ, ուխտադրուժներ, դրամանենդներ, աւազակներ, անառակներ և խայտառակութեան ու անբարոյականութեան վիժուածքներն ու մրուրը։ Փայլատակող աչքերը դատաւորին ուղղած՝ աղաղակում էին.

—Բարաբբան... տուր մեզ Բարաբբան...

Պիղատոսը՝ պորփիւրեայ սինաշարքի մէջ շրջապատված զինուորական ու հոգևորական վեհատիճան պաշտօնեաներով, բաց գլխով, սպիտակ զգեստով՝ ինչ որ մի բան էր ասում ժխորին. բայց թէ ինչ՝ Ցուդան չէր կարողանում լսել, որովհետև հռոմայեցի կուսակալի ամեն մի խօսքը ծածկվում էր ամբոխի կատաղի աղաղակներով։

—Բարաբբան, Բարաբբան...

Ցուդան սկսեց ներս խցկվել ամբոխի մէջ։ Բարեկամներից մի քանիսը ճանաչեցին. սրիկաները, մարդասպանները շնորհաւորում էին նը-բան և անառակները ժպտում էին երեսին։ Հասնելով ապարանների չէմքին՝ նա լսեց հազարաւոր կրծքերից դուրս պրծած մի նոր աղաղակ.

—Ի խաչ հան զդա, ի խաչ հան զդա։

Պիղատոսը թախծալից դէմքով իրան շրջապատող մարդկանց հետ ներս քաշվեց։ Մնացին միայն՝ երիտասարդ հարիւրապետը, որ թիկն տուած սրահի սիւներից մէկին, հետաքրքրութեամբ նայում էր ամբոխի վրա, և՝ պատկառելի ծերունի ռաբբին, որ ուշադրութեամբ կարդում էր մարգարէների գիրքը։ Ամբոխի կատաղութիւնը կամաց-կամաց իջաւ. ամենքն էլ զգում էին, որ ապարանների մէջ ինչ-որ մի օրհասական բան էր կատարվում։ Ռաբբին նշմարեց Ցուդային և մի քանի խօսք ասեց հարիւրապետի ականջին. սա նայելով Խակարիովտացու վրա, զզուանքով շարժեց ձեռքը և շտապով հեռացաւ։

Այդ ժամանակ կամացուկ բացվեցին ծանր դռներն իրանց բրոնզեայ փականքներով։ Պիղատոսը նորից երևաց պօրփիւրեայ սինաշարքերի մէջ. տիրեց գերեզմանական լռութիւն։ Մի բոպէից յետոյ Աստուծոյ ժողովրդի առաջ ներկայացաւ Յիսուսը երկու զինուորի պաշտպանութեան ներքոյ—դլխին՝ փշեայ պսակ, ճակատի ու այտերի վրայ երևում էին արիւնոտ շիթեր,

համարում գործադուլը շարունակել՝ թէ գործադուլը Պետերբուրգում դադարելու և թէ տեղական ուսանողութեան անհամապատասխան տրամադրութեան պատճառով։

Մարտի 27-ին, սակայն, Իւրիեվի համալսարանի մօտ 500 ուսանողներ կրկին ժողով գումարեցին և այն կարծիքը յայտնեցին թէ պէտք է շարունակել օբստրուկցիան, որի պատճառով և վերոյիշեալ համալսարանում բոլոր ուսանողներին արձակելու միջոցը ձեռք առնվեց նոյն այն հիմունքների վրա, ինչպէս և ուրիշ համալսարաններում, ուր այդ միջոցը գործադրվել է։

(Կը շարունակվի)

## ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

(Պերճ Զիլինգարեանի սպանութեան գործը)

—

Զը նայելով, որ երեխայի դիակի արտաքին նշանները ոչ մի կասկած չէին թողնում նրան արդէն վաղուց մեռած համարելու, բժիշկ Աբգուշելի ասելով, Մեղաւորեան մօտեցաւ դիակին և սկսեց զննել նրա զարկերակը, իսկ յետոյ փորձեց պնդել, թէ դիակը դեռ տաք է, ցանկանալով, ըստ երևոյթին, այդպիսով ցրվել ներկայ եղողների կարծիքը այդ ոճրագործութեան մէջ Սեպուհ Քիւրդեանի մասնակցութեան մասին։ Պերճ Զիլինգարեանի դիակը գտնող մարդկանց ցուցմունքների և յանցանքը գործած տեղում քննիչի կատարած քննութեան համաձայն, ապացուցվեց, որ հանգուցեալ երեխայի դիակը, ջրից հանելուց առաջ, գտնվում էր գետակի յատակում արուեստական կերպով փորած փոսի մէջ, չորս կողմից քարերով շրջապատած, իսկ վերևից դրած էր մի այնպիսի ծանր քար, որ չորս միլիցիոներ հազիւ էին կարողանում բարձրացնել։ Դիակը գտնելուց պարզվեց, որ երեխայի վիզը կապած է եղել բարակ թոկով, որի ծայրերը տարած էին դէպի ծնկների տակը և բարձրացրած դէպի կռակը ու նորից երկու անգամ զոով փաթաթած։ Երեխայի շորերը գտան բոլորովին կարգին, մինչև անգամ ոչ ցեխոտած էին և ոչ էլ աւազոտ։ Դատաստանական բժշկական քննութիւնից յայտնվեց, որ Պերճ Զիլինգարեանի մահն առաջ է եկել խեղդելուց, հէնց այն թոկով, որը գտան նրա վզին կապած և որ մարմինը ջուրն են դցել մահից յետոյ, որտեղ մնացել է 12 ժամ։ Ցետագայ քննութիւնից պարզվեց, որ Սեպուհ Քիւրդեան, որն առաջ լինում էր իր քրոջ—Վարեազ Տիրատուրեանի ամարանոցում, Մախինջաուրում, մի մի տօն օրերին, Պերճ Զիլինգարեանի սպանելուց առաջ մնացել է այնտեղ ամբողջ վերջին շաբաթը, չունենալով դրա մասին թոյլտուութիւն Կամենկարեանից, որի մօտ նա ծառայելիս է եղել Բաթումում։ Նա, որ մինչև այդ ժամանակ բոլորովին չէր լինում Զիլինգարեանների տանը, սկսեց յաճախ այցելել նրանց ամարանոցը, խնդրեց թոյլտուութիւն որս անելու նրանց պարտէզում և սկսեց ընծայել երեխաներին սպանած թռչուններ։ Օգոստոսի 23-ին Քիւրդեան մի քանի անգամ եկաւ Զիլինգարեանների պարտէզը, մինչև որ իր հետ տարաւ Պերճին, որը դուրս էր եկել բակը խաղալու։ Քննութիւնը պարզեց, որ այն ճանապարհը, որով, ինչպէս բացատրեց Քիւրդեան, Պերճ Զիլինգարեան հետևել է նրան, առանց իր ցանկութեան, երեխան առանց կողմնակի օգնութեան չէր կարող անցնել, որովհետև այդ ճանապարհը տեղ-տեղ անցնում էր ցից ժայռերով, ծածկված թուփերով։ Այն տեղը, որտեղ, Քիւրդեանի ասելով, իր վրա յարձակվեցին աւազակները, բոլորովին բաց է և լաւ երևում է Վերբօլոզովի ամարանոցից, որը գտնվում է այդտեղից 500 քայլ հեռաւորութեան վրա։ Օգոստոսի 24-ին, առաւօտեան, պրիստաւ Բեզանով այնտեղ, ուր կապոտած ընկած էր Քիւրդեան, գտաւ հացի և պանրի փշրանք, իսկ քիչ ժամանակից յետոյ միլիցիօնէր Իւսուբ Գօգիտիձէ գտաւ մի և նոյն տեղը ծառի տակ թաղցրած երկու կտոր կարմիր ճոթ, որից մէկը, էկսպերտների ասելով, նմանութիւն ունէր այն կտորի հետ, որը գտան կապկած Քիւրդեանի երեսին, և ապա յայտնվեց, որ հէնց այն կտորից է կըտրած։ Բացի դրանից, հաստատեցվեց Զիլինգարեանի գտած տեղը ձեռքի հետքերը, որ մնացել էին աւազի վրա, պարզվեց, որ Քիւրդեանի ձեռքի հետքերն են։ Վերոյիշեալ բոլոր փաստերը հիմք ծառայեցին Սեպուհ Քիւրդեանին մեղադրելու այս գործի մէջ։ Օգոստոսի 28-ին Քիւրդեան հարցուփորձի ենթարկվելով, որպէս արդէն մեղադրվող, շարունակում էր պնդել իր առաջին ասածների վրա, թէ աւազակներն են յարձակվել։ Դրանից յետոյ, քննութեան ժամանակ աչքի է ընկնում Յովհաննէս Մեղաւորեանի գործունէութիւնը, որն ակնյայտնի նպատակ ունէր Սեպուհ Քիւրդեանին անմեղ դուրս բերել։ Սեպուհ Քիւրդեանի հէնց կալանաւորելու օրը յայտնվում է տասն և մէկ տարեկան վկայ Թագուհի Բագանեան, որը ցոյց տուեց, թէ օգոստոսի 24-ի առաւօտեան, երբ դեռ շարունակում էին որոնել Պերճ Զիլինգարեանին, մի ինչ որ անյայտ թիւրք, հանդիպելով նրան, ասեց. «տղային յափշտակեցին գիշերապահ պահապանները, նրանք ինձ կանչում էին այդ գործին մասնակցելու, բայց ես հրաժարվեցի», և այդ խօսքերից յետոյ անհետացաւ թփերում։ Այդպիսի ցուցմունքը, ի հարկէ, չէր կարող մեծ վստահութիւն ներշնչել, և ինքն Թագուհի Բագանեանն էլ, երկրորդ հարց ու փորձի ժամանակ աշխատում էր հրաժարվել իր ասածներից, բայց քննութիւնը պարզեց, որ վերոյիշեալ վկան ապրում է Յովհաննէս Մեղաւորեանի մօտ, որից Թագուհու հայրը կապալով վերցրած հող ունի։ Այդ վկայի դերը գործի մէջ աւելի պարզվեց, երբ նրա ցուցմունքների առիթով Օքսէն Բագանեան յայտնեց, թէ ինքն ոչ թէ իրան՝ Թագուհուց, այլ առաջին անգամ Մեղաւորեանի տանը լսեց, թէ իր աղջիկը մի բան գիտէ այդ գործի մասին։ Բացի վերոյիշեալ վկայից, Զիլինգարեանի խօսքով, Յովհաննէս Մեղաւորեան, սպանութիւնից չորս օր յետոյ, բերեց իր մօտ նրա մօտ ապրող ածխագործ Սահակ Բագանեանին, որը Պերճի սպանութիւնից մի փոքր առաջ լսել էր իբր թէ տարեան թիւրքերի բանակցութիւնները մի ինչ որ յանցանք գործելու մասին։ Բանտարկված Սեպուհ Քիւրդեան նոյեմբերի 19-ին ցանկացաւ նոր ցուցմունք տալ գործի մասին և յայտնեց քննիչին, թէ ինքն տարաւ Պերճին նրա սպանութեան տեղը Յովհաննէս Մեղաւորեանի յորդորների և սպառնալիքների ազդեցութեան տակ, թէ Մեղաւորեան նշանակեց սպանութեան օրը օգոստոսի 23-ը և կազմեց սպանութեան պլանը, թէ սպանութեան մասնակիցներն էին նոյնպէս Մեղաւորեանի դրդմամբ վերջինի մօտ ծառայող հայ Սահակը և մախինջաուրեցի երկու թիւրքեր, որոնցից մէկը չիլ, բայց որոնց անունը և ազգանունը ինքն չը դիտէ. թէ սպանութեան օրը, ինչպէս պայմանաւորված էր առաջուց, նա, տանելով իր հետ Պերճ Զիլինգարեանցին, գտաւ վերոյիշեալ իր երեք մեղակիցներին այն տեղում, ուր յետոյ կապած դտան իրան. թէ Սահակը և թիւրքերից մէկը այդտեղից իրանց հետ տարան Պերճին, ասելով, թէ թռչուն կը տան նրան, իսկ չիլ թուրքը առաջ թոկով կապեց նրա ձեռքերը և ոտքերը և աչքերը կապեց, որից յետոյ գնաց իր ընկերների ետևից. թէ որդու սպանութեամբ Մեղաւորեան կամենում էր վրէժխնդիր լինել Արշամ Զիլինգարեանից նրա վարմունքի համար Տրապիզոնում, հայերի կոտորածների ժամանակ, 1895 թվին, որովհետև նա չէր օգնում հայերին, չը թողեց նրանցից շատերին թաղվել իր տան մէջ և մինչև անգամ լրտես էր. թէ սպանութեան վերոյիշեալ շարժառիթը Մեղաւորեան իրան էլ, մեղադրվողին, յայտնեց, հանդիսանալով նրան օգնել վերոյիշեալ վրէժը լուծելու։

(Կը շարունակվի)

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Երկրագործութեան մինիստրը դիմել էր զանազան նահանգների զեմստվոներին՝ տալով հարցեր տեղական աղգաբնակութեան գիւղատնտեսական կարիքների մասին։ Ստացած բազմաթիւ տեղեկութիւններից երևում է, որ զեմստվոների կարծիքով ամենամեծ կարիքը—գիւղական ժողովրդի կրթութեան կարիքն է և հող աւելացնելու պահանջը։

—

Ապրիլի 14-ին, դատաստանական պալատի պրոկուրորի օգնական պ. Լէմերման, նահանգական դատարանի պրոկուրորի օգնական պ. Վորոնով և առանձին կարևոր գործերի քննիչ պ. Աբէլ, այցելեցին Թիֆլիսի քաղաքային ուպրավան՝ մի քանի գործեր քննելու համար, ի միջի այլոց և ձիաքաշ երկաթուղուն վերաբերեալ գործը։

—

Կանանց առևտրական կրթութեան գործը համակրութիւն է գտնում բարձր շրջաններում։ Ներկայ ապրիլի 3-ին ֆինանսների մինիստրը հաստատեց կանանց առևտրական կուրսերի կանոնադրութիւնը Սարատով քաղաքի համար։ Դասընթացքը պէտք է տևի երկու տարի։ Իւրաքանչիւր լսարանում կարող են լինել միայն մինչև 50 ուսանողուհիներ։ Կուրսերը լսելու համար պէտք է ունենալ միջնակարգ դպրոցի, այն է՝ գիմնազիաների և ինստիտուտների աւարտման վկայական։

—

Ի նկատի ունենալով, որ Զատկի տօներին զանազան ուսումնարանների աշակերտներ շատ են երթևեկում երկաթուղիներով, Անդրկովկասեան երկաթուղու գլխաւոր ինժենէր Շայկեվիչ կարգադրել է, որ այս տօներին Բաղուի, Բաթումի և Թիֆլիսի մէջ աշակերտների համար առանձին երրորդ կարգի վագոններ աւելացնեն։

—

Առաջիկայ մայիսի 1-ից նաւթի տեղափոխութիւնը պէտք է կատարվի նոր սակագնով կամ տարիֆով։ Պետրօվսկիից մինչև Նովոռոսիյսկ արտահանութեան նաւթի պուդից պէտք է վերցնվի երկաթուղու ցիստերն-վագոններով տեղափոխութեան համար փոխանակ 17,11 կոպէկի, որ ներկայումս գոյութիւն ունի՝ 13,8 կոպէկ. այն դէպքում, երբ ցիստերն-վագոնները պատկանում են մասնաւոր անձանց, պէտք է վերցնվի այժմեան 14,75 կոպէկի փոխարէն 11,87 կոպէկ պուդից։ Էժանանալու պատճառը այն է, որ Բաղուից Բաթում տեղափոխվող նաւթի սակագինը 13,80 կոպէկից իջեցրած է 12 կոպէկի։

—

Մեր խմբագրութեան մէջ ստացվել են հետևեալ նոր հրատարակութիւնները. 1) Վ. Փափազեանի՝ «Հայ Բոշաներ», ազգագրական ուսումնասիրութիւն, մեծադիր 99 երես, արտատպված «Ազգագրական Հանդէսից», Թիֆլիս, 1899. գինն է 50 կոպէկ. 2) Ե. Պարոնեանի՝ «Արևելեան առասպելներ», երգախառն կատակերգութիւն, հրատարակութիւն Գիւտ քահ. Ազանեանի, Թիֆլիս, 1899, գինն է 50 կոպէկ. 3) 4) Даніель-Бековъ-ի՝ «О сбытѣ волжскаго лѣса въ г. Баку въ связи съ развитіемъ нефтяной промышленности», որը իբրև զեկուցում՝ կարդացված է Պետերբուրգի անտառային ընկերութեան մէջ։

—

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ Պետերբուրգում հիմնվող պօլիտէխնիական ինստիտուտի շինութիւնը մտադրութիւն ունեն կառուցանել անտառային ինստիտուտի մօտ։ Շինութեան համար մտադրութիւն կայ որոշել 700,000 ռուբլի։ Պետերբուրգի պօլիտեխնիկումը իր պրոգրամի կողմից կը զանազանվի կայսրութեան մէջ եղող ուրիշ պօլիտեխնիկումներից։ Ի միջի այլոց Պետերբուրգի պօլիտեխնիկումի մէջ կը դասաւանդվի նաւակառուցման մասնագիտութիւնը։

—

«Новое Обозрѣніе» լրագրին հաղորդում են Գանձակից. «Զիկօվանիին սպանող աւազակների և նրանց հետամուտ եղողների մէջ տեղի ունեցաւ հրացանաձգութիւն, որի ժամանակ սպանվեց տեղական ձիաւոր պահապաններից՝ Մասում Աղին և, ինչպէս պատմում են, վիրաւորված է աւազակներից մէկը—Մաշադի Զաբար։ Ի նկատի ունենալով, որ արիւնի հետքերը հասնում էին մինչև Կուր գետը, կարծում են, որ աւազակը ընկնելով ջուրը՝ խեղդվել է։ Երէկ ոստիկանատուն եկան երկու գիւղացի և յայտնեցին, թէ «Գեօգ-Իմամի» մօտ նրանց վրա յարձակվեցին երկու ձիաւոր, որոնցից մէկը՝ հրացանը քաշելով նրանց դէմ, հարցրեց. «Ճանաչում էք դուք ինձ»։ Գիւղացիները պատասխանեցին՝ «ոչ»։ Այդ ժամանակ աւազակներից մէկը ասաց. «Գնա, ասա գաւառապետին, որ Մաշադի Զաբար սպանված է, թող նրան փնտռեն Կուր գետում, իսկ ես Կարան եմ, և ինձ երբէք չէ կարող բռնել»։ Ապա խլելով խեղճ գիւղացիներից ձիաները, ձիաւորները փախչում են»։

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻՑ

—

Տրապիզոն, ապրիլի 5-ին

Այս տարի ձմեռը շատ լաւ անցաւ. վատ օր շատ քիչ անգամ ունեցանք. ամանութիւնը ամեն բանի մէջ. ծով ու ցամաք առատ բերք ունէին։ Ցեղոյս արդիւնագործութեան մէջ գլխաւոր տեղ բռնող կաղինը բաւական առատ էր և ծախվեցաւ շատ լաւ գնով, զանթարը (44 օխայ) մինչև 120—180 ղրուշ. թէև գիւղացին չը կարողանալով սպասել, հազիւ 90—95 ղրուշի ծախեց, բայց դարձեալ գոհ է, քանի որ անցեալ տարի 45—55-էն վեր չը բարձրացան գները։ Ծխախոտը նոյնպէս լաւ հասած էր, բայց Ռէժին, ծխախոտ մշակող երկրագործի անկշռում այդ ցեցը, անյագօրէն կուլ կը տայ բնութեան այդ շնորհքը, խեղճ գիւղացուն միշտ թողլով արմատները։

Մենք ալ ունինք մեր քաղաքային ինքնավարութիւնը (պէլէտիէ)։ Գուցէ անհետաքրքիր չը լինէր մի քանի տեղեկութիւններ տալ պէլէտիէի կազմութեան և գործունէութեան նկատմամբ և ցոյց տալ, թէ ինչպէս մեր մօտ բոլոր գեղեցիկ անուն կրող հաստատութիւնները անուանական են։ Ունենք առևտրական սենեակ, գաւառական լրագիր, կառավարական՝ քաղաքացիական և զինուորական դպրոցներ, որքերու դրամարկղ, երկրաչափներ, անտառային տեսուչներ, բժիշկներ և այլն. ափսոս որ բոլոր պաշտօններն ու պաշտօնեաներն միմիայն կապկային նմանութիւնն են ներկայացնում. բայց անցնենք ինքնավարութեան։

Քաղաքային ընտրութիւններու մասնակցելու իրաւունք ունին ամեն անոնք, որ տարեկան 50 ղուրուշի անշարժ կալուածական տուրք կը վճարեն կառավարութեան (տուրքը 4 առ 1000). իսկ ընտրվելու իրաւունք ունենալու համար՝ տարեկան 100 ղրուշէ աւելի տուրք վճարող պէտք է լինել։ Քաղաքագլուխը (պէլէտիէ ըէիզ) կընտրվի քուէարկութեամբ և չորս տարի կը պաշտօնավարէ, իսկ վարչութեան անդամները երկու տարին անգամ մը կը փոխվին նոյնպէս քուէարկութեամբ։ Քաղաքային ընտրութիւնը կը կատարվի 6 հոգու վրա. վալին լիազօր իրաւունք ունի թէկուզ այդ 6-էն ամենաքիչ քուէ ստացողը հաստատել քաղաքագլխի պաշտօնին մէջ, մնացած 5-ը կը դառնան վարչութեան անդամներ։ Վալիներու բարեխղճութիւնը աշխարհահռչակ լինելով, դժուար չէ հետևցնել թէ քաղաքագլխութեան ով արժանի կը լինի։ Վարչութիւն ընելով՝ պէտք է հասկանալ ձեր ուզածվան, իսկ դուռայի իմաստով ոչ մի բան ունինք։ Պէլէտիէն իր առօրեայ գործերը կը վարէ մի քանի քարտուղարներով և չավուշներով. ունի նաև բժիշկ և երկրաչափ։ Չավուշներու պետը «պէլէտիէ մամուրի» կը կոչվի, բոլորն ալ չնչին ամսականներ ունին, բայց ամենապատասխանատու պաշտօնակատարներն են. գրեթէ այդ սիլնքոր ապուշներուն է յանձնված ընդհանուր մաքրութեան, փողոցներու վրա հսկողութիւնը և ջրի բաշխման գործը։

Ցաւ է խոստովանել, որ Թիւրքիայի ամեն ցեղերու մէջ շատ հաղուագիւտ են այն անձինք, որոնք բարեկեցիկ լինելով հանդերձ, լայն կերպով հասկանային քաղաքացիական պարտականութիւնները և ձգտէին անոնց իրագործման, բայց ես առաւել այդպիսիները անգտանելի են թիւրքերու մէջ։ Ով որ քաղաքագլուխ կամ վարչութեան անդամ լինելու պայքար կը մղէ, երբէք ի նկատի չունի քաղաքի շահերը. քաղաքագլխի գործունէութիւնը կը լինի օրքան կարելի է շուտ հարստանալ և աւելի խոր դատարկել կասսան, որ միշտ պարտքով կը յանձնվի յաջորդին. իսկ անդամներունը՝ անմիջապէս սաղացնել իրենց կտրած ալիւրները հացագործներուն և կաշառքով փոխարինել իրենց անուռնիկ լինելը. մոռցայ ըսել, որ մեր քաղաքագլուխը կը ստանայ տարեկան 1500—2000 ռուբլի. իսկ անդամները ազգասիրաբար ձրի կը ծառայեն։

Քաղաքային օրէնսդրութեամբ՝ իւրաքանչիւր հասարակ փողոցի լայնութիւնը պիտի լինի 8 թիւրքական արշին (5 մետր 44 սանտ.), իսկ պողոտաներունը՝ (ճատտէ) 10 արշ. (6 մետր 80 սանտ). բայց տարիներ, տասնեակ տարիներ կուգան ու կերթան, տուներ կը քանդվին ու կը նորոգվին, նոր թաղեր կը կազմվին, դարձեալ նոյն նեղլիկ փողոցները, նոյն օձապտոյտ թաղերը. եթէ տնային պարտէզներու ցանցը չը լինի, դժուար թէ եւրոպական մաքուր ու լայն փողոցներու վարժվող անձ մը կարողանայ բնակիլ մանաւանդ թրքաթաղերը, այնքան դարշահոտ ու ճնշող են այդ լաբիւրինթոսները։

Տրապիզոնը թէև թրքական գեղեցիկ և ամենամաքուր քաղաքներէն մին կը համարվի, սակայն բաղդատելով նոյն իսկ դրացի Բաթումի հետ, շատ յետընկած է։ Մէկդի ձգենք նաւահանգստի, երկաթուղիի, քաղաքային թատրոնի և գրադարաններու բացակայութիւնը, որը գուցէ դարեր տևէ, եթէ քաղաքական որևէ փոփոխութիւն չը կատարվի. չունենք մի հատ կանոնաւոր գծով փողոց, կանոնաւոր լուսավառութիւն, և հասարակաց այգիներ։ Արևելեան հրապարակի մէջ եղած քաղաքապատկան 2 գեղեցիկ պարտէզներն իսկ վարձու կը տրվին չայճիներու, մինչդեռ իրար միացնելով՝ հիանալի parc մը կարելի էր ունենալ։ Քաղաքը ամփիթէատրի ձևով ծովի եզերքին ձգուած լինելով, կարող էր մի քանի ծովահայաց սքանչելի այգիներ կազմել. օրինակ, նաւահանգստին վրա կանգնած Կիւղէլ-Հիսար կոչված տեղը կարող էր մրցել Բաթումի, Սեվաստոպոլի և Օդեսայի քաղաքային այգիներու հետ. չենք գիտեր ինչու համար կը պահեն այդ մարտկոցը, քանի որ մի վայրկեան անգամ չի դիմար թշնամու ռումբերուն և քաղաքի արտաքին պաշտպանութեան համար արդէն ոչինչ արված չէ։ Փողոցները անուններ ունին, բայց գտնելու կամ սորվելու համար պէտք է երկար մնալ. ժողովուրդը ինքը մի կարգ փողոցներ և անկիւններ մկրտած է աղբի, ցեխի և այլ անուններով. քաղաքին ամեն կողմերէն

կանցնին առուակներ, որոնք պարզապէս բաց կոյուղիներ են. ով է հոգացողը, ով է դարման մտածողը: Խոլէրաներ, ժանտախտներ հարկաւոր են, որ իրենց տարած անագին զոհերով ցնցեն je mange-ով խորասուզված կառավարիչները և 1—2 ամսվայ համար միայն ողողեն քաղաքը ասետ ֆէնիքով. 92—93 թվին խոլերային հայերը ձրի թէյարան բացին, բայց անմիջապէս խափանվեցաւ կառավարութեան կողմէ, իսկ մի քանի ամիս վերջը յայտնվեցաւ մի ինչ որ Պօնկովսկի փաշա և սկսաւ կիրով չէզոքացնել համաճարակը. ամեն շարժում, ամեն քայլ, ամեն գործ, որ կապ ունի հասարակաց բարիքի հետ, մակերևոյթական է և միայն «ի ցոյց օտարաց». անցաւ վրտանգը, մեկնեցաւ մի բարձրաստիճան հիւր, դարձեալ «էսկի թաս, էսկի համաժ»:

Այս տարի քաղաքագլուխ ընտրուեց հաճի Գատի օղլի. անգամ մը ևս պաշտօնավարած է, իսկապէս միակ թուրք աղան, որ արժանի լինէր այդ կոչման. որպէս զի ընթերցողները չը շփոթին, պարտք կը համարեմ յայտնել որ մեզ մօտ, արժանիք, բարիք, արդարութիւն, համոզում, հաւատարմութիւն և այլն սովորականէն տարբեր իմաստով կը գործածուին. ուստի «արժանի» ըսելով նպատակս էր յայտնել, որ կ ա շ ա ռ ա կ ե ր չէ (ամենահաղուագիւտ արժանաւորութիւնը Թիւրքիայի մէջ), բայց ոչ մի հասկացողութիւն ունենալով քաղաքաշինութեան մէջ, օգտակար ալ չէ կարող դառնալ, ինչպէս արդէն փորձը ցոյց տուած է. այս անգամ պաշտօն ստանձնած օրը հացերու գինը երկու փարայով (²/₈-դ կօպէկ) իջեցուց: Քաղաքային վարչութեան անդամներու մէջ միշտ մէկ քրիստոնեայ կը գտնուէր, այս անգամ չը կայ, գտնէ նմուշի համար: Հայոցմէ ժառաւորապէս 70 հոգի ընտրական ձայն ունին, բայց անհոգութեան պատճառով շատ քիչերը կը մասնակցին. և ինչ օգուտ, եթէ մասնակցին ալ:

Տեղացի

## ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Le Courrier des Balkans» լրագիրը հաղորդում է, որ Փոքր-Ասիայի Անգօրա քաղաքի մի մասը կրակի ճարակ է դարձել: Վնասը 30,000 ոսկի են հաշուում:

—Մակեդոնական կենտրոնական մասնաժողովը Սոֆիայում հրաւիրեց այդ քաղաքում մայիսի 1-ին (13-ին) մակեդոնական կոնգրէս գումարել:

—Հռոմից հաղորդում են, որ կրետական գործերի վերաբերմամբ Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի դեսպանների վերջին խորհրդակցութեան մէջ, արտաքին գործերի մինիստր Կանէվարոի նախագահութեամբ, հաւանութիւն տուին ծայրագոյն կոմիսարի վճռին՝ հրաւիրել շվէյցարական զինուորական պաշտօնեայ Ֆինանսական վարչութիւն կազմակերպելու համար Կրետէում: Բացի դրանից, չորս պետութիւնների ներկայացուցիչները վճռեցին խորհուրդ տալ ծայրագոյն կոմիսար արքայորդի Գէօրգիին, Բ. Դրան ցանկութեան համեմատ, ներումն շնորհել և անցեալ տարվայ օգոստոսի 13-ին, 14-ին և 15-ին անկարգութիւններին մասնակիցներին, որոնք բացառապէս մահմեդականներ էին:

## „ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

### ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

14 ապրիլի

ՄՕՍԿՎԱ: Մեծ Իշխանուհի Ելիսավետա Ֆէօդորօվնայի հովանաւորութեան տակ կազմված մասնաժողովը ծրագիր է կազմում Պարիզի ցուցահանդէսում տնայնագործական բաժին բանալ՝ տալով փողոցի ձև մի շարք տներով: Պետերբուրգում կազմակերպվում է մասնաժողովի բաժին:

ՎԻԵՆՆԱ: Նախկին մինիստր-նախագահ Գոդենվարտ վախճանվեց:

ՊԱՐԻԶ: Կիւինէ, շարունակելով իր ցուցմունքները, առաջ է բերում նշանաւոր համարվող մի նամակ, որը գրել է մի պաշտօնական անձն Շվարցկօպէնին, յունվարի 15-ին 1895 թվի, որի մէջ մատնացոյց անելով Պէրիէի հրաժարականի վրա, հեղինակը աւելացնում է. «Դրէյֆուսի մասին հանգիստ են: Վերջ ի վերջոյ ասում են, որ ես լաւ եմ վարվել»: Վկան առաջ է բերում և ուրիշ դօկումէնտներ և նորից հաւատացնում է, որ Դրէյֆուս մեղաւոր է մինչև անգամ այն դէպքում, եթէ նա «բորդէրօի» հեղինակը չը լինէր:

ՊԱՐԻԶ: Քաղաքային վարչութեան դահլիճում տեղի ունեցաւ նստաճաշ, ի պատիւ Պետերբուրգի քաղաքագլխի: Հիւրերի մէջ դտնվում էին Դիւպիւի, Դէլկասէ, իշխան Ուրուսօվ: Դեսերտի ժամանակ մի քանի կենացներ առաջարկվեցին:

ՊԱՐԻԶ: Նախաճաշիկի ժամանակ քաղաքային խորհրդի փոխ-նախագահ Վէբեր Պարիզ քաղաքի կողմից կենաց առաջարկեց զինաթափութեան գործի աջողութեան համար, որի համար պարտական ենք Ռուսաց Կայսրի վեհանձնութեանը: Ապա Վէբեր կենաց առաջարկեց ի պատիւ Պետերբուրգի դումայի, որին յայտնեց իր երախտագիտութեան զգացմունքները, և դառնալով Լէլեանովին խնդրեց լինել արտայայտիչ պարիզեցիների զգացումների Պետերբուրգի աղդարնակութեան առաջ: Դիւպիւի առաջարկեց Թագաւորի և Կայսերական տան կենացը: Իշխան Ուրուսօվ բաժակ առաջարկեց նախագահ Լուբէի և Պարիզ քաղաքի կենացը: Լէլեանովի շնորհակալութիւն յայտնեց ընդունելութեան համար, որը կարող է աւելի ամրացնել այն բարեկամական կապը, որով կապված են երկու աղդերը: Վերջը կոմս Սիւզոր առաջարկեց Ֆրանսուսական դաշնակցութեան կենացը, որը օգուտ է բերում պետութիւններին:

15 ապրիլի

ՊԱՐԻԶ: Լուբէ ընդունեց Լէլեանովին:

ՍՕՖԻԱ: Կառավարութիւնը հրաւէր է ստացել Հաագայի կոնֆերենցիային մասնակցելու: Միակ պատգամաւորը կը նշանակվի Պետերբուրգի բալգարական գործակալ Ստանչեվ:

ՎԱՇԻՆԳՏՕՆ: Մակ-Կինլէյ հաստատեց Գերմանիայի և Ամերիկայի մէջ նոր ստորջրեայ հեռագրական գծի շինութեան նախագիծը: Այդ բանում նկատում են Միացեալ-Նահանգների ցանկութիւնը՝ պահպանելու բարեկամական յարաբերութիւն Գերմանիայի հետ:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

**Ա. Ս. ՊՈՒՇԿԻՆԻ ՅՕԲԵԼԵԱՆԻ ԱՌԻԹՈՎ**
դուրս եկաւ մամուլի տակից Կ. Ն. Բէգիչեվի
**ՊՈՒՇԿԻՆԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ**
(Пушкинъ на Кавказѣ)
պատկերազարդ հրատարակութիւնը, պատկերներով, Պուշկինի ձեռագրով: Գինը 25 կոպէկ:
Օտարաքաղաքներից դիմում են. Թիֆլիս՝ Կ. Ն. Բեգիչեվի գրավաճառանոցին: Ուսումնարաններին 10% զիջում: 1—1

**ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ 1899 Թ. ԼՈՏՍ ԵՆ ՏԵՍԵԼ**

| | Ր. | Կ. |
|---|---|---|
| ԶԷՍՍԻԿԱՑԻ ԱՌԱՋԻՆ ԱՂՕԹՔԸ, թարգ. Գ. Գաւշեանի | — | 20 |
| ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱՆԳԼԻԱՑԻՆ, Հաւֆի. թարգմ. Շ. Տ.—Ն. | — | 5 |
| ՀՐԷԱՑ ԱԲՆԷՐԸ, Հաւֆի. թարգմ. Շ. Տ.—Ն. | — | 3 |
| ՍԷՐԷՈՍԻ ՊԱՏՄ. և Մ. Խորենացի, Ստ. Մալխասեանցի | — | 40 |

Դիմել՝ Тифлисъ, Тифлисское Общество Изданія Армянскихъ книгъ. կամ Tiflis, (Russie), Société de la publication des livres Arméniens. 4—10

Լոյս տեսաւ
**Ե. ՊԵՐՈՆԵԱՆԻ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ**
Բ.
**ԱՐԵՒԵԼԵԱՆ ԱՏԱՄՆԱԲՈՅԺ**
Կատակերգ. երգախառն ի հինգ արարս:
Հրատ. Գիւտ ա. քահ. ԱՂԱՆԵԱՆՑ
ԳԻՆԸ 50 ԿՕՊ. 1—3

**Զրի սովրեցնում եմ**
ՆՈՐ ՄԻՋՈՑ ԽՈՆԱՒ ՊԱՏԵՐԸ ՁՈՐԱՅՆԵԼՈՒ, որի համար ունեմ վկայագրեր: Այդ միջոցը, որի գները այժմ պակասեցրել եմ, պարունակված առանձին թիթեղապատ ամանի մէջ, կարելի է քսել խոնաւ պատերին ամեն եղանակում, և չորանում է հինգ օրում.
Ֆունտը արժէ 50 կոպէկ.

| | | |
|---|---|---|
| Տասը ֆունտ առնողին | 5% | զեղչ. |
| Քսան » » | 10% | » |
| 1 պուդ » » | 20% | » |

Կարելի է ուղարկել և պօստով. վճարը մի մասը կանխաւ, միւսը վերադիր:
Հասցէս՝ Օլգինսկայեա փողոց, տուն Մելիք-Ազարեանցի № 4. Աւետիս Առաքելեան: 2—3

## ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

—

Մարդատար № 1 գնացքը դուրս է գալիս ԲԱԳՈՒԻՑ դէպի ԹԻՖԼԻՍ ցերեկվայ 4 ժամին և 15 րոպէին. Թիֆլիս է հասնում առաւօտեան 8 ժամ 38 րոպէին դուրս է գնում ԹԻՖԼԻՍԻՑ դէպի ԲԱԹՈՒՄ առաւօտեան 9 ժամ և 20 րոպէին. Բաթում է հասնում երեկոյեան 8 ժամ և 52 րոպէին:

Մարդատար № 3 գնացքը դուրս է գալիս ԲԱԳՈՒԻՑ դէպի ԹԻՖԼԻՍ՝ երեկոյեան 10 ժամ 50 րոպէին. Թիֆլիս է հասնում երեկոյեան 5 ժամ և 9 րոպէին: Դուրս է գնում ԹԻՖԼԻՍԻՑ դէպի ԲԱԹՈՒՄ՝ երեկոյեան 6 ժամ 10 րոպէին. Բաթում է հասնում առաւօտեան 7 ժամին:

Մարդատար № 2 գնացքը դուրս է գալիս ԲԱԹՈՒՄԻՑ դէպի ԹԻՖԼԻՍ՝ առաւօտեան 8 ժամ 30 րոպէին. Թիֆլիս է հասնում երեկոյեան 8 ժամ 30 րոպէին: ԹԻՖԼԻՍԻՑ դէպի ԲԱԳՈՒ է դուրս գալիս երեկոյեան 9 ժամ 15 րոպէին. Բաղու է հասնում ցերեկվայ 12 ժամ 59 րոպէին:

Մարդատար № 4 գնացքը դուրս է գալիս ԲԱԹՈՒՄԻՑ դէպի ԹԻՖԼԻՍ երեկոյեան 8 ժամ 40 րոպէին. Թիֆլիս է հասնում առաւօտեան 9 ժամ 55 րոպէին: ԹԻՖԼԻՍԻՑ դէպի ԲԱԳՈՒ է դուրս գալիս առաւօտեան 11 ժամ 20 րոպէին. Բաղու է հասնում առաւօտեան 5 ժամ 42 րոպէին:

## ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից:
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վենէրական (սիֆիլիս) և միզասեռ. հ.
Կ. Մ. ՋԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—11—12 ժ. կանանց հիւանդ.
Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ.
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
Ա. Գ. ԳՈՒՐԿՕ—1¼—2¼ ժ. ներքին և միաւեռական հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Վ. Մ. ՄԱԽՎԻԼԱՁԷ—5—6 ժ. ներքին և երեխայոց հ.
Ա. Ն. ՇՊԱԿՕՎՍԿԻ—6—7 ժ. նեարդային (էլեկտրաբուժութիւն), վենէրական և մորթի հ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—6½—7 ժ.
Տ. Ի. ԲՈՒԴԵՆԿՕ հիւանդանոցումը քիմիական և խոշորացուցական հետազոտութիւններ է անում մէզի, խխի, արեան, կաթի և այլն:
Վճար 50 կ. չքաւորները ձրի: Հաւախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցի վերատեսուչ՝
127—150 Բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

**Կովկասի ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ գրադարան-ընթերցարան**
(Միջին փողոց, տ. Տէր-Ասատուրովի, Ադելխանեանի մագազինի դիմաց), բաց է առաւօտեան ժամը 9—2 և երեկոյեան ժամը 5—9: Ստացվում են մայրաքաղաքների և տեղական բոլոր թերթերը: Մուտքը 2 կոպ., ամսով 40 կ. աշակերտներից կէս վճար: 31—50

**ՀԱՐԿԱՒՈՐ Է**
մի հմուտ խմբապետ՝ Եկմալեանի մեթոդով Սղնախում քառաձայն խումբ պատրաստելու համար: Ցանկացողները կարող են դիմել. Сигнахъ, Д-ру Моисею Мосесову. 1—3

**ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ-ՊԱՆՍԻՕՆ**
**Ա. ՏԷՐ-ՅԱԿՈՎԲԵԱՆԻ**
Ընդունում է երիտասարդ, կիսաթոշակաւոր և գիշերօթիկ աշակերտներ: Պատրաստում է գիմնազիանների, կադետների կօրպուսի, զեմստվէյերների, բէալական և այլ ուսումնարանների համար:
Փոքր պատրաստականում երեխաները ընդունվում են առանց քննութեան, վեց տարեկանից սկսած: Ուսումնարանում ուսուցանում են բարձրագոյն ուսումնաւարտած մասնագէտներ, գիմնազիական ուսուցիչներ: Ասանդելի առարկաներն են՝ կրօն, ռուսաց, հայոց, ֆրանսիական, գերմանական, լատինական, յունաց, վրաց լեզուներ, թուաբանութիւն, ալգեբրա, երկրաչափութիւն, աշխարհագրութիւն, պատմութիւն (ռուսաց և ընդհանուր), բնական գիտութիւն, նկարչութիւն, գրութիւն, երգեցողութիւն, երաժշտութիւն:
Նոյնտեղ ընդունվում են ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՆԵՐ: Օտարաքաղաքացիների համար կան ամենայն յարմարութիւններ:
Հասցէն. ТИФЛИСЪ, Гановская ул., № 11 3-րդ գիմնազիայի մօտ: (Հ) 9—10

**ԷՓԱՆ, ԼԱՒ ԵՒ ՃԱՇԱԿՈՎ**
**„ՎԻԷՆՆԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ"**
**Ա. ԽՈՒԴԱՎԵՐԴԵԱՆԻ**
Գօլով. պրոսպէկտ, I-ին գիմնազիայի հանդէպ:
Ստացված է մեծ քանակութեամբ տղամարդկանց և երեխաների գարնանային և ամառվայ պատրաստի հագուստներ: Գների էժանութեան և ապրանքի լաւութեան մասին. պ. պ. գնողները կարող են համոզվել, անձամբ յաճախելով մեր խանութը:
9—10



ЖЖЕНІЕ СПОСОБОМЪ ЛЕТЮРКЪ ДЕ РОЗЬЕ 20% БОЛЬШЕ АРОМАТИЧЕСК. ЧАСТЕЙ
**ЖЖЕНЫЙ КОФЕ**
ПРОДАЖА ВЕЗДѢ С. СІУ и К°
3—26



**Գիւղատնտեսական գործիքներ եւ մեքենաներ**
**Լ. ԽԱՆ-ԱՂԵԱՆԻ**
250 նկարով: Գինն է 50 կոպ.
Դիմել՝ Тифлисъ, Обществу Изданія Армянскихъ Книгъ. (Ե. ո.) 31—50

Дозволено цензурою, Тифлисъ, 15 Апрѣля 1899 г.
Типографія Грузинск. Издат. Т—ва, Лорисъ-Меник. ул. № 13.